

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N: ՀՀՏԿԵՆ-Զ-ԳՀԾՁԲ-25/3-1**

ք. Երևան

« 13 » մարտի 2025 թ.

ՀՀ ՏԿԵՆ «Ջրատ» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Արզարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Վանիկ Առաքելյան Ռոբերտի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է է բեռնատարների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ՝ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների օրոքս համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման



արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (յուրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 8000000 (ութ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxՄԻԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 54619546 (հիսունչորս միլիոն վեց հարյուր տասնինը հազար հինգ հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 78027922 (յոթանասունութ միլիոն քսանյոթ հազար ինը հարյուր քսաներկու) ՀՀ դրամ:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

Սահմանված առավելագույն գների ցանկում չներառված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է Կատարողի կողմից հաստատված գործող գնացուցակի հիման վրա՝ կիրառելով տվյալ չափաբաժնի համար ՄԳ/ՆԳ հարաբերակցությունը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

1 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանման պարտավորությունների չկատարման կամ ոչ պարզաձև կատարման հանգամանքը:



5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, զործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց անմիջապես 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ



լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելից գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 63 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍԹԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՏԿԵՆ «ԶԻՐԱՑ» ՓԲԸ  
Երևան, Վարդանանց փակուղի 8  
ՀՀ Տիեռասների նախարարության  
գործառնական վարչություն  
h/h 900018010034, ՀՎՀՀ 00093621

Տնօրեն

Ա. ԱՐԳԱՐՅԱՆ

/ստորագրություն/

Կ.Տ



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ա/Ձ Վանիկ Առաքեյան  
ՀՀ Արարատի մարզ, գ. Գեղանիստ 4փ, տ 11  
Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ  
Հ/Հ 1570062818758100  
ՀՎՀՀ 49877012  
Տնօրեն՝ Վ. Առաքեյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
Հրավե- րով նախա- տեսված չափա- բաժնի համարը	գնումների սլյանով նախատեսված միջանցիկ ձանկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	501111220/501	Ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծառայություններ Տես Հավելված 1.1	դրամ	8000000	1	Կատարողի՝ ծառայության մատուցման վայր	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2025թ

\* Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փողային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, քաջատությամբ այն դեպքի, երբ ընդրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում

\*\* Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ  
 Երևան, Վարդանանց փակուղի 8  
 ՀՀ Ֆինանսների նախարարության  
 գործառնական վարչություն  
 հ/հ 900018010034, ՀՎՀՀ 00093621  
 Տնօրեն

Ա. ԱՐԳԱՐՅԱՆ



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Ա/Ձ Վանիկ Առաքելյան  
 ՀՀ Արարատի մարզ, գ. Գեղանիստ 4փ, տ 11  
 Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ  
 Հ/Հ 1570062818758100  
 ՀՎՀՀ 49877012  
 Տնօրեն՝ Վ. Առաքելյան





### ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Կատարող պետք է նախապես զննի տրանսպորտային միջոցը (մեքենա-մեխանիզմը), որի վերաբերյալ Պատվիրատուի կողմից նշվող էլ. փոստի հասցեին պետք է ուղարկվի գրավոր հաստատված զննության արդյունքները՝ նշելով մատուցվելիք ծառայությունների տեսակը (ները), չափման միավորը (ները), քանակը (ները) և ընդհանուր գումարը (ները) և կատարման ժամկետները:
- Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը կատարողի տեխսպասարկման կայանում կամ Պատվիրատուի կողմից նշված վայրում, գրանցվելու օրվանից՝ Պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված ողջամիտ ժամկետների ընթացքում:
- Սպասարկման ենթակա ավտոմեքենաները, որոնց միաժամանակյա քանակը կարող է լինել մինչև 3, պետք է պահպանվեն փակ, տանիքածածկ, հսկվող տարածքում:

### Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայաններից պահանջվող տեխնիկական զմայնակներ և պայմանները

Տեխնիկական սպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա ստորև բերված նվազագույն հնարավորությունները, որակով և ժամանակին տեխնիկական սպասարկում կատարելու համար՝

- փակ և պահպանվող տարածք նվազագույնը 2 ավտոմեքենաների համար, պահակային ծառայության կողմից 24 ժամ հսկողության իրականացում,
- քարշակ, բեռնատարների և հատուկ տեխնիկայի համար, որը կանչը ստանալուց հետո 30 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ տեխնիկական սպասարկման կայանից դեպի խափանման (վթարի) վայր
- վացման կետ, ինչպես ավտոմեքենայի, այնպես էլ պահեստամասերի համար, դիտափոս, զորման համար անհրաժեշտ սարքավորումներ,
- կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի, ընթացքային մասի և թափքի առանձին սարքավորումների, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ,
- վերը նշված աշխատանքները կատարելու համար ունենա արհեստավարժ մասնագետներ, ոչ պակաս 3 տարվա աշխատանքային փորձով,
- պետք է կատարվի աշխատանքների ինժեներական վերահսկողություն:
- պահեստամասերը պետք է լինեն նոր և բարձրորակ, զործարանային փաթեթավորմամբ:

Նշված պահանջներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում ծառայությունը չի ընդունվի:  
Երաշխիքներ՝

Ծառայությունների, պահեստամասերի և ուժային դեպոյաների համար նվազագույնը՝ 1ամիս:

Պահանջվող մասնագետներ՝

- նվազագույնը 5 ավտոփականագործ,
- նվազագույնը 2 շարժիչագործ,
- նվազագույնը 1 ավտոէլեկտրիկ,
- նվազագույնը 1 անվաքացքի ուղղման մասնագետ,
- նվազագույնը՝ 1 թիթեղագործ,
- նվազագույնը՝ 1 զոդող:

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ «Զրառ» ՓԲԸ  
Երևան, Վարդանանց փակուղի 8  
ՀՀ Ֆինանսների նախարարության  
գործառնական վարչություն  
h/h 900018010034, ՀՎՀՀ 00093621

Տնօրեն

Ա. ԱՐԳԱՐՅԱՆ

Վարչություն

Կ.Տ

### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Ա/Ձ Վանիկ Առաքելյան  
ՀՀ Արարատի մարզ, գ. Գեղանիստ 4փ, տ 11  
Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ  
Հ/Հ 1570062818758100  
ՀՎՀՀ 49877012  
Տնօրեն՝ Վ. Առաքելյան



**ԲԵՈՒՆԱՏԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ  
 ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐ**

Հ/հ	անվանումները	չավման միավոր	միավորի գինը, ՀՀ դրամ
<b>ՄԱՁ-555</b>			
1	Մեկնարկիչի հանում և տեղադրում	հատ	10000
2	Արգելակման ռետինե խողովակների փոխարինում	հատ	1000
3	Իքնաթափի միացման անջատիչի փոխարինում	հատ	3000
4	Իքնաթափի միացման էլ. կոճերի փոխարինում	հատ	4000
5	Խցիկի մեղմիչի փոխարինում	հատ	2500
6	Վառելիքի ծեռքի մղիչի փոխարինում	հատ	10000
7	Մեկնարկիչ	հատ	80000
8	Արգելակման ռետինե խողովակ	հատ	2500
9	Իքնաթափի միացման անջատիչ	հատ	5000
10	Իքնաթափի միացման էլ. կոճ	հատ	17000
11	Արգելակման ռետինե խողովակի պղնձե տափուղակ	հատ	80
12	Խցիկի մեղմիչ	հատ	8000
13	Վառելիքի ծեռքի մղիչ	հատ	7000
14	Էներգոակումուլյատորի (բուստեր) տեղադրում	հատ	5000
15	Խլացուցիչի խողովակների միացման խողովակի փոխարինում	հատ	7000
16	Էներգոակումուլյատոր (բուստեր)	հատ	30000
17	Խլացուցիչի խողովակների միացման խողովակ	հատ	15000
18	Խլացուցիչի խողովակների միացման խողովակ	հատ	850
19	Խլացուցիչի խողովակների միացման խողովակ	հատ	850
20	Խլացուցիչի խողովակների միացման խողովակ	հատ	850
21	Խլացուցիչի խողովակների միացման խողովակ	հատ	850
22	Խլացուցիչի խողովակների միացման խողովակ	հատ	850
23	Խլացուցիչի խողովակների միացման խողովակ	հատ	850
24	Խլացուցիչի խողովակների միացման խողովակ	հատ	850
25	Կամեռ անվաղողի N 900-1200	հատ	10000
26	Կամեռի փոխարինում	հատ	5000
<b>1.Շարժիչ</b>			
1	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	100 000
2	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	հատ	130 000
3	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	հատ	85 000
4	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	հատ	85 000
5	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	հատ	76 000
6	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	հատ	13 000
7	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	հատ	8 500
8	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	հատ	80 000
9	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	հատ	80 000
10	Շարժիչի մխցաօղբի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	80 000
11	Շարժիչի մխցաօղբի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	70 000
12	Շարժիչի մխցաօղբի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	80 000
13	Շարժիչի մխցաօղբի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	80 000
14	Շարժիչի մխցաօղբի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	76 000
15	Շարժիչի մխցաօղբի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	102 000



16	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	51 000
17	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	85 000
18	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	85 000
19	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	51 000
20	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	25 000
21	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	70 000
22	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	25 000
23	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	25 000
24	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	21 000
25	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	21 000
26	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	60 000
27	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	42 000
28	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	55 000
29	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	42 000
30	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	35 000
31	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	75 000
32	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	42 000
33	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	80 000
34	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	17 000
35	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	51 000
36	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	25 000
37	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	8 500
38	Շարժիչի մխցցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	հատ	8 500
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>			
55	Ցուղի և յուղի զտիչի փոխարինում	հատ	4 000
56	Ավտոմեքենայի յուղում	հատ	4 000
58	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25 000
59	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25 000
60	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	հատ	25 000
61	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	հատ	25 000
62	Վառելիքի փողրակի փոխարինում	հատ	8 500
63	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	հատ	8 000
73	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	հատ	8 500
74	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3 500
75	Բռնկման կարգավորում	հատ	2 500
76	CO կարգավորում	հատ	2 500
79	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25 000
80	Վառելիքի բաքի մաքրում	հատ	8 500
85	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	հատ	5 000
86	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	հատ	2 500
87	Բենզոլրաքի քենզոմոլիչի ցանցի փոխարինում	հատ	25 000
88	Ցուղի ճնշման տվիչի փոխարինում	հատ	8 500
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>			
89	Հովիարի փոխարինում	հատ	13 000
90	Հովիարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	13 000
91	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	17 000
92	Շերտափեղկի փոխարինում	հատ	13 000
95	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	4 000
96	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	հատ	4 000
97	Ջրի ծորակի փոխարինում	հատ	15 000
98	Հովացման համակարգի ուստինս փողրակի փոխարինում	հատ	8 500



100	Հովհարի թանկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	17 000
101	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	հատ	25 000
102	Վառարանի շարժիչի փոխարինում	հատ	13 000
103	Ընթրնոստատի փոխարինում	հատ	17 000
104	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	հատ	20 000
105	Գններատորի փոկի փոխարինում	հատ	13 000
107	Ջրի ռադիատորի վերանորոգում	հատ	55 000
109	Խլարարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	հատ	4 000
110	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	13 000
111	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	հատ	850
112	Խլարարի ներդիրի փոխարինում	հատ	1 700
113	Խլարարի կախոցի փոխարինում	հատ	850
114	Հովաքցման հեղուկի փոխարինում	հատ	8 500
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>			
115	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	21 000
116	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	հատ	18 000
117	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	հատ	73 000
118	Կցորդման ուռնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	4 000
120	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8 500
122	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	83 000
123	ՓՏ-ի փոխարինում	հատ	51 000
124	ՓՏ-ի առջևի խտարուկի փոխարինում	հատ	30 000
125	ՓՏ-ի հետևի խտարուկի փոխարինում	հատ	30 000
126	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	հատ	25 000
127	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	51 000
128	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	հատ	25 000
129	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	հատ	5 500
130	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	հատ	5 500
131	ՓՏ-ի առամնանիկի փոխարինում	հատ	5 500
132	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	5 500
133	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	հատ	5 500
134	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	հատ	5 000
135	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	հատ	5 000
136	ՓՏ-ի փոխանցման թակի փոխարինում	հատ	8 500
137	ՓՏ-ի յուղի փոխարինում	հատ	1 700
138	Վազքայափի շարժաբերի փոխարինում	հատ	5 000
<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>			
154	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	80 000
155	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	30 000
156	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	հատ	30 000
157	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	հատ	20 000
158	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	հատ	25 000
159	Բաշխիչ տուփի դիֆերազմանների փոխարինում	հատ	17 000
160	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում	հատ	17 000
161	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	հատ	34 000
162	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	հատ	21 000
163	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	21 000
164	Բաշխիչ տուփի երկժանկի փոխարինում	հատ	17 000
165	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	հատ	17 000
166	Բաշխիչ տուփի խտարուկի փոխարինում	հատ	17 000



167	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	հատ	13 000
168	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	17 000
169	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	հատ	8 500
170	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	17 000
171	Տվիչի փոխարինում	հատ	8 500
172	Բաշխիչ լիսեռի առամանակի փոխարինում	հատ	17 000
173	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	20 000
174	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում	հատ	35 000
<b>6. Առջևի և հետքի կամրջակներ</b>			
175	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	55 000
176	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ոեղուկտոր)քանդում, արատավորում և հավաքում	հատ	35 000
177	Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25 000
178	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	հատ	17 000
179	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտարուկերի փոխարինում	հատ	17 000
180	Կամրջակի յուղի փոխարինում	հատ	2 500
181	Առջևի կամրջակի բռունցքի գնդածն հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25 000
182	Առջևի կամրջակի քլեկավորման համակարգի նորոգում	հատ	35 000
183	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում	հատ	17 000
184	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	հատ	35 000
185	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	73 000
186	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	հատ	55 000
187	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25 000
188	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	հատ	18 000
189	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտարուկերի փոխարինում	հատ	18 000
190	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	հատ	25 000
<b>7. Կախոց</b>			
201	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	17 000
202	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8 500
206	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	4 000
207	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2 500
222	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	35 000
223	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	17 000
224	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	17 000
225	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8 500
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>			
226	Ղեկասյունակի(колоска) հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	100 000
227	Ղեկասյունակի(колоска) խաչուկի փոխարինում	հատ	25 000
228	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	հատ	4 000
231	Ղեկային ծողի առանցքակալի փոխարինում	հատ	13 000
232	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	հատ	25 000
234	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	հատ	25 000
235	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	հատ	35 000
236	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	հատ	8 500
237	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	հատ	8 500
238	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5 000
239	Ղեկային ծողի գնդե հողակալի նորոգում	հատ	5 000
240	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5 000
241	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	հատ	7 000



243	Հիդրոուձեղարարի համակարգի յուղի փոխարինում	հատ	2 500
<b>9. Արգելակային համակարգ</b>			
244	Վակումային ուձեղարարի փոխարինում	հատ	21 000
245	Վակումային ուձեղարարի փականի փոխարինում	հատ	8 500
246	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8 500
252	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	4 000
253	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	17 000
254	Արգելակային համակարգի օդահանում	հատ	850
256	Հետևի թմրուկային կոճղակների փոխարինում	հատ	17 000
261	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	4 000
265	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	13 000
266	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	հատ	8 500
269	Հետևի արգելակների կարգավորում	հատ	3 400
270	Արգելակային համակարգի լվացում	հատ	4 000
271	Արգելակային հեղուկի փոխարինում	հատ	1 700
<b>10. Էլեկտրասարքավորում</b>			
272	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	հատ	17 000
273	Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում	հատ	8 500
274	Գեներատորի ստատորի փոխարինում	հատ	4 000
275	Գեներատորի ռոտորի փոխարինում	հատ	4 000
276	Գեներատորի լիքքավորման ռեչի փոխարինում	հատ	4 000
277	Գեներատորի դիողային կառքչակի փոխարինում	հատ	4 000
278	Գեներատորի առանցքակայի փոխարինում	հատ	5 000
279	Գեներատորի փոկանիլի փոխարինում	հատ	5 000
280	Հազոցի հարկածամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	850
281	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	հատ	10 000
282	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	հատ	4 000
283	Մեկնարկիչի իրանի փոխարինում	հատ	4 000
284	Մեկնարկիչի րոնիչի փոխարինում	հատ	4 000
285	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	հատ	4 000
286	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	հատ	4 000
287	Մեկնարկիչի հետևի կափույրի փոխարինում	հատ	2 550
288	Մեկնարկիչի ռեչի փոխարինում	հատ	5 000
289	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	հատ	5 000
290	Մեկնարկիչի պատյանի փոխարինում	հատ	4 000
291	Ազդանշանի կարգավորում	հատ	1 700
292	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5 000
293	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	13 000
294	Հակամշուշային լապտերի տեղադրում	հատ	8 500
295	Սարքերի պանելի հանում և տեղադրում	հատ	13 000
296	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8 500
297	Առջևի լապտերների կարգավորում	հատ	7 000
298	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	հատ	4 000
301	Լուսամփոփի լարերի նորոգում	հատ	8 500
302	Չափիչ տարքերի հանում և տեղադրում	հատ	13 000
303	Ապակեվաքիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8 500
304	Ապակեվաքիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8 500
305	Ջեռուցիչի շարժիչի փոխարինում	հատ	8 500
306	Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչների փոխարինում	հատ	8 500
307	Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչների նորոգում	հատ	8 500
308	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	հատ	17 000



309	Դռների էլ/փականի փոխարինում	հատ	13 000
310	Ապակեամբարձիչի փոխարինում	հատ	17 000
311	Ապակեամբարձիչի շարժիչի փոխարինում	հատ	17 000
312	Մագնիստոլայի տեղադրում	հատ	13 000
313	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	4 000
314	Մարտկոցի փոխարինում	հատ	1 700
315	Մարտկոցի կլեյմանների փոխարինում	հատ	1 700
316	Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	հատ	1 700
317	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	հատ	1 700
318	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	հատ	15 000
319	Էլ/հաղորդալարերի հիմն. խտրցի փոխարինում կամ նորոգում	հատ	25 000
320	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խտրցի փոխարինում կամ նորոգում	հատ	25 000
322	Էլեկտրական շտեյկերի փոխարինում	հատ	1 700
323	Էլեկտրական անջատիչի փոխարինում	հատ	1 700
325	Ջրի ցողիչի փոխարինում	հատ	1 700
<b>11. Ավտոմեքենայի սրահ</b>			
326	Տաքացուցիչ ռադիատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	հատ	13 000
327	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	հատ	7 000
328	Դռան պաստառի հանում և տեղադրում	հատ	4 000
329	Նստարանի հանում տեղադրում կամ փոխարինում	հատ	8 500
330	Դռան փականի փոխարինում	հատ	7 000
332	Դռների դրսի բռնակ փոխարինում	հատ	8 500
333	Դռների ներսի բռնակ փոխարինում	հատ	8 500
334	Լամպի փոխարինում	հատ	1 700
335	Դիմապակու փոխարինում	հատ	42 000
<b>12. Այլ ծառայություններ</b>			
336	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 սմ <sup>2</sup> -ի համար	հատ	1 500
337	Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում գին 1 կտորի համար	հատ	8 500
338	Եռակցման աշխատանքներ գին 1սմ (զծ.մ) համար	հատ	1 700
339	Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար	հատ	1 700
340	Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար	հատ	1 700
341	Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	հատ	4 000
342	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	13 000
343	Կոնդիցիոների յուղի ավելացում	հատ	3 500
344	Անիվի հանում և տեղադրում	հատ	850
345	Անվախեծի նորոգում 1 հատ	հատ	4 000
346	Անվադողի վերանորոգում	հատ	4 000
347	Անիվի բալանսավորում	հատ	850
348	Անվախեծի վալց	հատ	8 500
349	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	հատ	850
<b>Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b>			
<b>1. Շարժիչ</b>			
1	Շարժիչի բլոկ	հատ	800 000
2	Շարժիչի գլխիկ	հատ	500 000
3	Բարձիկ	հատ	85 000
5	Շարժիչի գլխիկի միջադիր	հատ	21 000
6	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	հատ	13 000
7	Շարժիչի փական դուրս մղող	հատ	8 500
8	Շարժիչի փական ներս մղող	հատ	8 500
9	Շարժիչի փականի խտարուկ	հատ	1 700



10	Փականի զսպանակ	հատ	4 000
11	Ծնկածն լիսեռ	հատ	700 000
12	Ծնկածն լիսեռի խտարուկ առցևի	հատ	4 000
13	Ծնկածն լիսեռի խտարուկ հետևի	հատ	13 000
14	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	հատ	17 000
15	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	հատ	17 000
16	Հենակային տափօղակ	հատ	8 500
17	Մխոց	հատ	34 000
18	Մխոցային օղակներ 1 կ-տ	հատ	17 000
19	Մխոցային մատ	հատ	4 000
23	Շարժիչի պաշտպանիչ	հատ	25 000
28	Շարժիչի առցևի կափարիչ	հատ	85 000
29	Շարժիչի վերևի կափարիչ	հատ	45 000
30	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր	հատ	8 500
31	Թափանիվ	հատ	100 000
32	Շարժաթև	հատ	68 000
33	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	հատ	25 000
34	Ատամնանիվ ծնկածն լիսեռի	հատ	25 000
35	Գլխիկի քոլտ	հատ	4 000
36	Ծնկածն լիսեռի քոլտ	հատ	4 000
37	Պարկուճ (չ/ՌՖՅՈՐ) 1 կ/տ	հատ	42 000
38	Կարտեր	հատ	30 000
39	Փական յուղի տարայի	հատ	8 500
40	Խուփ ընդարձակման բակի	հատ	8 500
41	Բարձիկ փ/տուփի	հատ	51 000
42	Կարտերի միջադիր	հատ	8 500
43	Շարժիչի յուղ 1լ	հատ	4 500
44	Շարժիչի բաշխիչ լիսեռ	հատ	110 000
45	Շարժիչի յուղի զտիչ	հատ	6 500
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>		հատ	
47	Ինժեկտորի մաքրման հեղուկ	հատ	5 500
49	Յուղի մղիչ	հատ	65 000
55	Ինժեկտորի բոցամուղ դիզելային շարժիչի	հատ	35 000
56	Բոցամուղի խտարուկ	հատ	1 700
59	Վառելանյութի զտիչ	հատ	13 000
60	Վառելանյութի փողոցակ	հատ	4 000
61	Արագարարի ճուպան	հատ	17 000
64	Օդաքաշի փողոցակ	հատ	15 000
65	Օդի ծախսաչափիչի փողոցակ	հատ	15 000
66	Օդի զտիչ	հատ	20 000
67	Պատյան օդի զտիչի	հատ	13 000
68	Յուղի տվիչ	հատ	8 500
69	Բաշխիչ լիսեռի տվիչ	հատ	35 000
70	Հովհարի տվիչ	հատ	6 500
71	Ջրի խողովակ երկար	հատ	6 500
72	Ջրի խողովակ կարճ	հատ	5 000
73	Ջրի տվիչ	հատ	8 000
74	Բենզոլաքի տվիչ	հատ	42 000
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>			
78	Հովհար	հատ	25 000
80	Ռադիատոր	հատ	120 000



81	Ընդարձակող բացի փողրակ	հատ	8 500
82	Ընդարձակող բաց	հատ	15 000
83	Ռադիատորի փողրակ ներքևի	հատ	8 500
84	Ռադիատորի փողրակ վերևի	հատ	8 500
85	Թերմոստատ	հատ	8 500
86	Ջրի մղիչ	հատ	43 000
88	Փոկ մեծ	հատ	17 000
94	Փոկանիվ գնեքատորի փոկի	հատ	25 000
95	Խլարարի ներդիր	հատ	4 000
96	Խլարարի կախոց	հատ	4 000
98	Խլարարի անուր (Խամուտ)	հատ	1 700
99	Խլարար	հատ	85 000
100	Շարժիչ վառարանի	հատ	18 000
101	Վառարանի ռադիատոր	հատ	17 000
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>			
102	Կցորդման աշխատանքային գլան	հատ	25 000
103	Կցորդման գլխավոր գլան	հատ	25 000
104	Կցորդման տանող սկավառակ	հատ	34 000
105	Կցորդման տարվող սկավառակ	հատ	38 000
106	Կցորդման առանցքակալ	հատ	18 000
107	Կցորդման ոտնակ	հատ	8 500
108	Կցորդման ճուպան	հատ	21 000
109	Կցորդման փողրակ	հատ	4 000
110	ՓՏ-ի յուղ (կիսասինթետիկ 75/90)	հատ	7 000
111	Փոխանցման տուփ	հատ	480 000
112	ՓՏ-ի պատյան	հատ	85 000
113	ՓՏ-ի առջևի խտարուկ	հատ	4 000
114	ՓՏ-ի հետևի խտարուկ	հատ	4 000
115	Վազքաչափի շարժաբեր	հատ	13 000
116	ՓՏ-ի առանցքակալ	հատ	13 000
117	ՓՏ-ի առաջնային լիսեռ	հատ	30 000
118	ՓՏ-ի երկրորդային լիսեռ	հատ	30 000
119	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	հատ	30 000
120	ՓՏ-ի երկժանի	հատ	13 000
121	ՓՏ-ի ատամնանիվ	հատ	17 000
122	Համաժամիչ	հատ	17 000
123	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	հատ	8 500
135	Հերմետիկ	հատ	3 000
<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>			
136	Բաշխիչ տուփ	հատ	220 000
137	Բաշխիչ տուփի խտարուկ	հատ	8 500
138	Բաշխիչ տուփի առանցքակալ	հատ	13 000
139	Բաշխիչ տուփի ատամնանիվ	հատ	13 000
140	Բաշխիչ տուփի լիսեռ առաջնային	հատ	13 000
141	Բաշխիչ տուփի լիսեռ միջանկյալ	հատ	25 000
142	Բաշխիչ տուփի բարձիկ	հատ	25 000
143	Բաշխիչ տուփի լիսեռ միջակա	հատ	25 000
144	Բաշխիչ տուփի տվիչ	հատ	13 000
145	Բաշխիչ տուփի շղթա	հատ	43 000
146	Բաշխիչ տուփի երկժանի	հատ	21 000
147	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմ	հատ	68 000



148	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմ	հատ	51 000
149	Բաշխիչ տուփի շարժաքեր	հատ	13 000
150	Բաշխիչ տուփի դիֆերենցիալ	հատ	55 000
151	Բաշխիչ տուփի դիաֆրագմաներ	հատ	18 000
152	Բաշխիչ տուփի յուղ (կիսասինթետիկ 75/90)	հատ	7 000
153	Կարդանային լիսեռ	հատ	150 000
155	Կարդանային լիսեռի խաչուկ	հատ	25 000
<b>6. Առցնի կամ հետևի կամրջակներ</b>			
156	Հետևի կամ առցնի կամրջակ	հատ	350 000
157	Ռեդուկտոր առցնի	հատ	280 000
158	Ռեդուկտոր հետևի	հատ	280 000
159	Դիաֆրագմա ռեդուկտորի	հատ	15 000
160	Շարժաքեր ռեդուկտորի	հատ	15 000
161	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	հատ	100 000
162	Դիֆերենցիալ	հատ	65 000
163	Դիֆերենցիալի սատելլիտ	հատ	38 000
164	Գունդ դիֆերենցիալի	հատ	35 000
165	Պատյան սատելլիտների	հատ	8 500
166	Տանող ատամնանիվի խտաբուկ	հատ	17 000
167	Տանող ատամնանիվի առանցքակալ	հատ	17 000
168	Կիսաստնի	հատ	85 000
169	Կիսաստնու առանցքակալ	հատ	38 000
170	Կիսաստնու խտաբուկ	հատ	8 500
<b>7. Կախոց</b>			
174	Առցնի անվակունդ	հատ	102 000
175	Հետևի անվակունդ	հատ	102 000
176	Մանեկ անիվի	հատ	8 500
177	Գամասնդ անիվի	հատ	8 500
178	Հեղյուս անիվի	հատ	8 500
179	Անվակունդի ներքին առանցքակալ	հատ	25 000
180	Անվակունդի արտաքին առանցքակալ	հատ	25 000
183	Բոունցք առցնի	հատ	95 000
184	Բոունցք հետևի	հատ	95 000
185	Վռան զսպակի	հատ	7 000
186	Միջադիր զսպակի	հատ	13 000
189	Առցնի հարվածամեղմիչ	հատ	42 000
199	Հետևի ցնցամեղմիչ	հատ	42 000
200	Հետևի հարվածամեղմիչի վռան	հատ	4 000
206	Անիվի պաշտպանիչ	հատ	13 000
207	Անվահեծ	հատ	120 000
<b>8. Ղեկային մոխանիզմ</b>			
208	Ղեկայունակ	հատ	380 000
209	Ղեկային կալունի հողակապ	հատ	13 000
210	Ղեկայունակի առանցքակալի սոնի	հատ	13 000
211	Ղեկայունակի առանցքակալ	հատ	4 000
212	Ղեկայունակի խաչուկ	հատ	17 000
213	Ղեկային մեխանիզմի փականք	հատ	25 000
215	Ղեկայունակի վերանորոգման հավաքածու	հատ	43 000
216	Հիդրոուժեղարարի փուկ	հատ	8 500
217	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	հատ	30 000
218	Հիդրոուժեղարարի մղիչ	հատ	127 000



219	Բաք հիդրոուժեղարարի	հատ	17 000
220	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման փողրակ	հատ	25 000
221	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման փողրակ	հատ	13 000
223	Ղեկային ձողի ձգան	հատ	21 000
225	Հիդրոուժեղարարի յուղ, (DEXTRON-3) 1լ	հատ	7 000
226	Ճոճանակի լրակազմ	հատ	47 000
227	Ճոճանակ	հատ	47 000
228	Ճոճանակի վռան	հատ	21 000
<b>9. Արգելակային համակարգ</b>			
229	Գլխ. գլան	հատ	42 000
230	Վակուումային ուժեղարար	հատ	110 000
231	Արգելակային փողրակ	հատ	8 500
235	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	25 000
236	Հետևի թմբկային կոճղակ	հատ	25 000
238	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	25 000
<b>10. Էլեկտրասարքավորում</b>			
244	Գններատոր	հատ	127 000
245	Գններատորի ոտտոր	հատ	25 000
246	Գններատորի ստատոր	հատ	25 000
247	Գններատորի դիոդային կամրջակ	հատ	25 000
248	Գններատորի ոեյն	հատ	17 000
249	Գններատորի փոկանիվ	հատ	22 000
250	Գններատորի առանցքակալ	հատ	8 500
251	Մեկնարկիչ	հատ	127 000
252	Մեկնարկիչի խարիսխ	հատ	30 000
253	Մեկնարկիչի իրան	հատ	17 000
254	Մեկնարկիչի րոնիչ	հատ	30 000
255	Մեկնարկիչի ոեյն	հատ	17 000
256	Մեկնակիչի հետևի կափույր	հատ	8 500
257	Մեկնակիչի ածուխ	հատ	8 000
258	Բեռեցք	հատ	32 000
259	Մեկնակիչի կցորդիչ (ավտոմատ)	հատ	34 000
261	Առջևի լապտեր	հատ	13 000
262	Հետևի լապտեր	հատ	13 000
263	Էլեկտրական շտեկեր	հատ	2 500
264	Բոնկման կողպեք	հատ	10 000
265	Կոտակիչ մարտկոցի կլեյմաներ	հատ	2 550
